Հավելված 1
14.01.2013թ. կնքված լիցենզային պայմանագրի

Dasaran կրթական ծրագիր

Dasaran-ը հանրակրթության ոլորտում գործող կրթական համակարգչային ծրագիր է, որի նպատակն է նպաստել կրթական ոլորտի բարեփոխմանը, հանրակրթության ոլորտի թափանցիկության ապահովմանը, թափանցիկ գնահատման ու վերահսկման համակարգերի ներդրման միջոցով կրթության կառավարման արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև ծնող-ուսուցիչ-աշակերտ կապի ամրապնդմանը: Կրթական ծրագիրը մեկ առցանց հարթակում է համախմբում հանրակրթական դպրոցներում սովորող բոլոր աշակերտներին, նրանց ծնողներին և ուսուցիչներին:

Առաքելություն

Կրթական ծրագիրն ապահովում է կրթության հասանելիությունը հավասարապես բոլոր աշակերտների համար՝ անկախ նրանց սոցիալական կարգավիճակից և աշխարհագրական դիրքից: Կրթական ծրագրի կողմից մշակված ինտերակտիվ մեթոդների, մշակված էլեկտրոնային գործիքների և ուսուցողական խաղերի շնորհիվ ուսուցումն աշակերտների համար դառնում է առավել մատչելի և հետաքրքիր:

Dasaran կրթական ծրագիրն իր ստեղծած նորարարական գործիքների միջոցով աջակցում է առավել արդյունավետ կրթական քաղաքականության մշակմանը՝ ուղղված ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակների (որակյալ ուսուցում (ԿԶՆ 4), արդյունաբերություն, նորարարություն և ենթակառուցվածքներ (ԿԶՆ 9), կրճատված անհավասարություն (ԿԶՆ 10)) իրագործմանը:

Հավատարիմ մնալով իր որդեգրած առաքելությանը՝ կրթության ոլորտի որակական բարեփոխմանը, կրթական ծրագիրը տրամադրում է միասնական ցանցային հարթակ՝ հագեցած առցանց խաղերով, մրցույթներով, օլիմպիադաներով, ինչպես

նաև իրականացնում արտացանցային մի շարք միջոցառումներ: Ներկայումս Dasaran կրթական ծրագիրը գործում է Հայաստանի և Արցախի 1484 հանրակրթական դպրոցում՝ մեկ ընդհանուր հարթակում ներառելով 1,162,798 գրանցված բաժանորդի (561,321 աշակերտ և շրջանավարտ, 561,321 ծնող, 38,673 ուսուցիչ և 1,484 տնօրեն):

Կառուցվածք

Դպրոցների կառավարման և վերահսկման համակարգ

Կայքում առկա էլեկտրոնային օրագիրը և էլեկտրոնային մատյանը աշակերտների, ծնողների, ուսուցիչների և դպրոցի անձնակազմի համար մշակված գործիքներ են, որոնք հնարավորություն են տալիս ստուգելու դպրոցականների առաջադիմությունը և տեղեկատվություն ստանալու տնային հանձնարարությունների, բացակաների, կարգապահության, կիսամյակային գնահատականների և դասավանդվող առարկաների մասին:

Աշակերտների, ծնողների, ուսուցիչների և տնօրենների համար նախատեսված վիճակագրական գործիքի միջոցով հնարավոր է հետևել աշակերտների առաջադիմության վարկանիշային տվյալներին դասարանի, դպրոցի կամ մարզի կտրվածքով, տեղեկատվություն ստանալ յուրաքանչյուր առարկայի միջին գնահատականի, աշակերտների առաջադիմության և բացակաների քանակի մասին: Մեկ այլ գործիքի միջոցով ուսուցիչը կարող է պարզել, թե աշակերտներից յուրաքանչյուրը որքանով է յուրացրել դասաժամի ընթացքում մատուցված նյութերը: Կայքի էլեկտրոնային հարթակում ուսուցիչները կարող են նաև ձևավորել խմբեր, որտեղ կկարողանան քննարկել կրթության ոլորտի բազմաբնույթ խնդիրներ՝ մատնանշելով նաև լուծման ուղիները:

E-stat էլեկտրոնային վերլուծական գործիք

Կրթական ծրագրի կողմից մշակված E-stat առցանց վիճակագրական-վերլուծական գործիքի միջոցով կատարվում է կրթական ցուցանիշների արդյունավետ մշտադիտարկում և վերլուծության է ենթարկվում դպրոցների արդյունավետությունը, աշակերտների կատարողականը, ինչպես նաև ժողովրդագրական տվյալների դինամիկան: Գործիքը հնարավորություն է ընձեռում ստանալու իրական ժամանակում թարմացվող այնպիսի տվյալներ, ինչպես օրինակ՝ մարզերում աշակերտների, ծնողների և ուսուցիչների բաշխվածությունն ըստ տարիքի կամ սեռի, աշակերտների միջին գնահատականը, գերազանցության և բացակայության ցուցանիշները, աշակերտական միջդպրոցական և արտաքին (այլ երկրներ) տեղաշարժերը, ուսուցիչների ծանրաբեռնվածության ցուցանիշները, ուսուցիչ-աշակերտ հարաբերակցությունը և այլն: Ըստ որում՝ էլեկտրոնային վերլուծական գործիքը եզակի հնարավորություն է տալիս նաև ստանալ վերը թվարկված (և ոչ միայն) վիճակագրական բոլոր տվյալների զարգացման համեմատական պատկերն ըստ տարիների:

Կրթական խաղեր

Այս բաժինը ներառում է ավելի քան 50 կրթական-ուսուցողական խաղեր, որոնք նպատակաուղղված են գիտելիքների ընդլայնմանը և թույլ են տալիս համատեղել ինտերակտիվ ու այլընտրանքային կրթությունը:

Կայքում առկա օժանդակ բաժիններն ու առցանց էլեկտրոնային գործիքները

Հանրագիտարան

Այս բաժնում օգտատերերը կարող են որոնել ու գտնել իրենց անհրաժեշտ տեղեկատվությունը աշխարհագրության, պատմության, արվեստի և մշակույթի, գյուղատնտեսության, կրոնի, սպորտի, Հայաստանի, հայկական բանակի, ռեկորդների և հայտնագործությունների, նշանակալի օրերի, ինչպես նաև մեծանուն մարդկանց մասին:

Դիմորդի անկյուն

Այս բաժինն ամբողջական տեղեկատվություն է տալիս Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատությունների, նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների մասին՝ ներառյալ այդ հաստատությունների կառուցվածքի նկարագրությունը, կրթական հաստատությունների վերաբերյալ գործող օրենքները, որոշումներն ու հրամանագրերը, ինչպես նաև վերոնշյալ հաստատություններում առկա մասնագիտությունները, ընդունելության կարգը, քննական թեստերի օրինակները, անցողիկ միավորների ցանկը, ուսման վարձը և այլն:

Առողջապահություն

Այս ինտերակտիվ բաժնում օգտատերերը կարող են տեղեկատվություն ստանալ առողջ ապրելակերպի, առաջին բուժօգնության, դեղորայքի, կոսմետոլոգիայի, ոչ ավանդական բժշկության, բժշկական իրավունքի, պատմական ժամանակագրության, երեխաների առողջության, հիվանդությունների և դրանց ախտանիշների մասին: Օգտատերերը կարող են նաև տեղեկանալ հրատապ թեմաներին ու

իրադարձություններին, դեպքերին և փաստերին, ընթերցել առողջապահական լուրեր, ալգորիթմեր, ստանալ խրատներ ու խորհուրդներ:

Գրական անկյուն

Կայքի այս բաժինը թույլ է տալիս աշակերտներին տեղադրել սեփական գրական-գեղարվեստական ստեղծագործությունները և ստանալ արձագանքներ, մեկնաբանություններ դրանց վերաբերյալ:

Մրցույթներ

Կրթական ծրագիրն իր գործընկերների հետ համատեղ պարբերաբար իրականացնում է տարբեր մրցույթներ և միջոցառումներ, որոնց միջոցով աշակերտները կարողանում են ինքնադրսևորվել՝ բացահայտելով իրենց բնորոշ հատկանիշներն ու ունակությունները:

Կայքի այս հետաքրքիր բաժնի միջոցով օգտատերերը տեղեկացվում են անցկացվելիք միջոցառումների մասին, ծանոթանում մասնակցության կարգին, ինչպես նաև ստանում տեղեկատվություն արդեն իրականացված միջոցառումների և հաղթող աշակերտների մասին:

Միջդպրոցական ինտերակտիվ ցանց

Dasaran-ն աշակերտների համար մշակված հեռահար կրթության, կրթության խաղայնացման, փորձի փոխանակման առանձին հարթակ է՝ հիմնված ներքին միջաշակերտական ցանցի վրա: